ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

07.02.2018թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն ք՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում 2017թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. Տեղեկատվության տրամադրում մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությամբ իրականացված աշխատանքների և գործատուների հետ համագործակցության մասին:

/Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «ՀՀ զբաղվածության գործակալության» Վանաձորի տարածքային կենտրոնի տնօրեն Արա Առաքելյան/

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառմանն ուղղված տարեկան հաշվետվության ձևերը հաստատելու մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

4. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.09.2015թ. «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 1044-Ն որոշման պահանջների և սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային Համակարգող խորհուրդներ ձևավորելու մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

5. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ՀՀ Լոռու մարզպետի 02.02.2018թ. թիվ 8 կարգադրությամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառմանն ուղղությամբ մարզում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունը կազմելու համար մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներից /ՏԻՄ և ՀԳՄ հարցերով, առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի ու սպորտի, քաղաքաշինության վարչություններ/՝ ըստ բնագավառների ձևավորել աշխատանքային խումբ և մինչև 2018թ. փետրվարի 26-ը ամփոփել արդյունքները:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/